***նախագիծ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«  » «_____» 2026թ. N -Ա

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման հավելվածի 3-րդ կետը.

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը (երաժշտական գործիքներ), ընդհանուր՝ 53485000 (հիսուներեք միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, սեփականության իրավունքով անհատույց հանձնել (նվիրել) Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներին՝ համաձայն հավելվածի:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
Երևան քաղաքի ավագանու
2026 թվականի _____ _____ի
N _____ որոշման

| Ծրագրեր | | «Վանաձոր Տեց Ընդեղանի 2 թիվ 1 հանրակրթական դպրոց» ՀՈԱՀ-ի գնումների գործընթաց | | «Վանաձոր Տեց Ընդեղանի 1 թիվ մանկապարտեզ» ՀՈԱՀ-ի գնումների գործընթաց | | «Վանաձոր Տեց Ընդեղանի Մշակութային տան» ՀՈԱՀ-ի գնումների գործընթաց | | «Վանաձոր Տեց Ընդեղանի Գրադարանային համակարգ» ՀՈԱՀ-ի գնումների գործընթաց | | «Վանաձոր Տեց Ընդեղանի Ֆիզիկական դաստիարակության մարզադաշտ» ՀՈԱՀ-ի գնումների գործընթաց | | «Վանաձոր Տեց Ընդեղանի Ս. Գրիգորյան գրադարան» ՀՈԱՀ-ի գնումների գործընթաց | | «Վանաձոր Տեց Ընդեղանի Ս. Գրիգորյան գրադարանի Ս. Գրիգորյան գրադարանի Գրքերի գրադարան» ՀՈԱՀ-ի գնումների գործընթաց | | «Վանաձոր Տեց Ընդեղանի Ս. Գրիգորյան գրադարանի Ս. Գրիգորյան գրադարանի Գրքերի գրադարանի գրքերի գրանցում

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը պայմանավորված է Երևան համայնքի հաշվեկշռում առկա երաժշտական գործիքները (թվով 71 երաժշտական գործիք) Երևանի ենթակայությամբ գործող 24 երաժշտական և արվեստի դպրոցներին սեփականության իրավունքով անհատույց հանձնելու գործընթացը կազմակերպելու անհրաժեշտությամբ: Որոշման ընդունման արդյունքում համայնքապատկան երաժշտական և արվեստի դպրոցները կհամալրվեն երաժշտական նոր գործիքներով, ինչը մեծապես կնպաստի Երևան քաղաքում գեղարվեստական կրթության համակարգի բնականոն գործունեության, մանուկների և պատանիների արտադպրոցական կրթության և գեղագիտական դաստիարակության շարունակական զարգացմանը, երաժշտական և արվեստի դպրոցների կողմից մատուցվող կրթական ծրագրերի որակի բարձրացմանը, ինչպես նաև կարևոր դերակատարություն կունենա մշակութային կրթության գրավչության մեծացման, շնորհալի և օժտված երեխաների երաժշտական ունակությունների բացահայտման ու զարգացման, շահառուների սոցիալական բեռի թեթևացման գործում:

Համայնքապատկան երաժշտական և արվեստի դպրոցներին սեփականության իրավունքով անհատույց հանձվող գույքը ձեռք է բերվել Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեում նախատեսված ծրագրի շրջանակներում, մրցութային կարգով և համայնքապատկան երաժշտական և արվեստի դպրոցներից ստացված պահանջագրերի հիման վրա: Երևան քաղաքի 2025 թվականի «Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում» ծրագրի իրականացման արդյունքում ձեռք է բերվել 12 անուն 71 երաժշտական գործիք, որոնց

ընդհանուր հաշվեկշռային արժեքը կազմում է 53485000 (հիսուներեք միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Գույքը սեփականության իրավունքով հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**